ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 829-Ա/Ք 26.08.2014թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ <<ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐ>> ԵՎ <<ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի N 10-Ն որոշման հավելված N 2-ի 30-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել հանրակրթական հիմնական դպրոցի 5-րդ դասարանի <<Ազգային երգ ու պար>> և <<Երաժշտություն>> առարկաների փորձնական ծրագրերը՝ 2014-2015 ուսումնական տարվա համար՝ համաձայն Հավելված N 1-ի և Հավելված 2-ի:

2. Ծրագրերը փորձարկել Հայաստանի Հանրապետության հետևյալ հանրակրթական ուսումնական հաստատություններում՝

1) Երևանի N 11 հիմնական դպրոց
2) Երևանի N 20 հիմնական դպրոց
3) Երևանի N 52 հիմնական դպրոց
4) Երևանի N 92 հիմնական դպրոց
5) Երևանի N 131 հիմնական դպրոց
6) Երևանի N 150 հիմնական դպրոց
7) Երևանի N 162 հիմնական դպրոց
8) Երևանի N 200 հիմնական դպրոց

9) ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյանի N 2 հիմնական դպրոց

10) ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիրի N 5 հիմնական դպրոց:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարին:



ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2014թ.----------N հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր (փորձնական)
հանրակրթական հիմնական դպրոցի
<<Ազգային երգ ու պար>> առարկայի
(5-րդ դասարան, 51 ժամ)

Բացատրագիր

Կոմիտասյան այն հայտնի ասույթը. <<Պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը>>, արդեն իսկ ցուցադրում է ազգային պարի, նաև երգ ու երաժշտության կարևորությունը հայեցի դաստիարակության, ազգային ինքնության, ինքնագիտակցության, ինքնաճանաչողության և ի վերջո ՀԱՅ քաղաքացի դաստիարակելու գործում: Այս տեսանկյունից <<Ազգային երգ ու պար>> առարկայի մուտքը հանրակրթական հիմնական դպրոց օրվա հրամայականն է, և պետք է լրացնի այն բացը, որն առաջացել է մեր հանրակրթության և նոր սերնդի դաստիարակության ասպարեզում:

<<Ազգային երգ ու պար>> առարկան 5-րդ դասարանում պետք է հիմք դնի մշակույթի միջոցով և մեր հազարամյա երաժշտական ավանդույթների փոխանցման շնորհիվ նոր սերնդի ազգային ինքնագիտակցության և գեղագիտական ճաշակի բարձրացման, մտավոր, հոգևոր զարգացմանն ու ազգային հոգեկերտվածքի հզորացմանը:

5-րդ դասարանում սովորողները պետք է ծանոթանան ոչ միայն ազգային երգ, երաժշտության և պարարվեստի կարևորագույն նմուշներին, այլև պետք է սովորեն դրանց ծագումնաբանությունը, այդ նմուշներից յուրաքանչյուրի հայրենիքում տարածաշրջանային պատկանելությունն ու խորհուրդները, կատարման տեղն ու ժամանակը, և այլն... Մեր հնամենի մշակույթում՝ թատերականացված գործողություններում ազգային ավանդական մշակութային տեսակների շաղկապվածությունն ու նրանց ներդաշնակեցումը՝ տվյալ գործողությունների ժամանակ, պետք է սովորողին ոչ միայն մոտեցնի իր ակունքներին ու տեսակին, պատմությանն ու ազգային հոգեկերտվածքին, այլ նաև ցույց տա արվեստներից յուրաքանչյուրի ներգործությունը հարակից արվեստների հետ, սովորեցնի նրանց համատեղ օգտագործման կարևորությունն ու վերջինիս շնորհիվ նրանց ազդեցության հզորացումը հայ կենցաղում և կրթադաստիարակչական ոլորտում:

Սովորողներին կներկայացվեն դիտակտիկ նյութեր, նաև պարերի, երգերի, երաժշտության գրառումների, նրանց ավելի մասսայականացման ու հանրությանը ավելի մատչելի ներկայացնելու սկզբունքներն ու մեթոդները

<<Ազգային երգ ու պար>> առարկայի ծրագրային նպատակներն են.

- Դաստիարակել ազգային, հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված ստեղծագործ մարդ և երկրի քաղաքացի, ազգային երգ ու պարի, երաժշտության և ազգային ավանդույթների, և դրանց շնորհիվ էթնիկ հոգեբանությանը ներդաշնակված մարդ և ազգային համայնքի անդամ,
- Հարգանք ներշնչել ժողովրդական ավանդույթների, ավանդական մշակույթի, մասնավորաբար ազգային երգ ու պարի, պարերգերի նկատմամբ, ցույց տալով դրանց տեղը համաշխարհային մշակույթի գանձարանում,
- Ազգային պարերի, պարերգերի, երգ, երաժշտության միջոցով ներկայացնել ազգային ավանդույթները, սովորողի ազգային արժանապատվությունն ու ազգային ինքնահարգանքը բարձրացնելու համար:

<< Ազգային երգ ու պար>> առարկայի հիմնական խնդիրներն են.

- Ծանոթացնել ազգային երգերի, երաժշտության, պարերի և պարերգերի ծագումնաբանության և զարգացման առանձնահատկություններին,

- Ցույց տալ երաժշտության, երգի, պարերգերի և պարերի փոխադարձ շաղկապվածությունը,
- Ուսուցանել ազգային պարերից և երգերից ամենատարածվածներն ու ամենակարևորները ազգային ինքնագիտակցության զարգացման և ազգային հոգեկերտվածքին ավելի ներդաշնակվելու համար,
- Զարգացնել սովորողների ռիթմի զգացողությունը, շարժումները մեղեդու հետ ներդաշնակ կատարելու և պարելու գործնական կարողություններն ու հմտություններն ու պարանմուշների, երգերի և պարերգերի հոգևոր վերապրումը,
- Կատարել պարային բեմադրություններ, և սովորեցնել ստեղծել պարի բուն շարժումներին ներդաշնակ իմպրովիզացիոն շարժումներ, սովորողների մոտ բեմադրական և ստեղծագործական հմտությունները զարգացնելով:

<<Ազգային երգ ու պար>> առարկայի ուսուցման և դաստիարակության հիմնական սկզբունքներն են.

- Ազգային երգ ու պարի, պարերգերի կատարողական հմտությունների զարգացում,
- Ազգային երգ, երաժշտության, պարերի և պարերգերի շնորհիվ սովորողին ազգային հոգեկերտված և ազգային ինքնագիտակցության ներշնչում
- Գեղագիտական, և բարոյահոգեբանական բարձր ճաշակի զարգացում,
- Ազգային մշակույթը որպես համամարդկային արժեքների և մշակույթի կամրջող օղակ

<< Ազգային երգ ու պար>> (5-րդ դ.) առարկային հատկացվում է շաբաթը 1,5 դասաժամ, ընդամենը՝ 51 ժամ:

Թեմա 1. Ներածություն /2ժամ/

Ավանդական պարերի ընդհանուր ծագումնաբանությունը, տարատեսակները

Թեմայի բովանդակությունը

Այս թեմայով սովորողներն իմանում են, թե ինչպես է առաջացել պարը, և մասնավորաբար ինչ ծագումնաբանություն ունի հայ ավանդական պարն ու զարգացման ինչ փուլեր է անցել և ինչպիսի տարատեսակներ ունի:

Սովորողները պետք է իմանան, որ հայ պարի հիմքում ընկած են զսպանակով շարժումները, և կախված պարերի արագություններից ինչպիսի փոփոխություններ են կրում դրանք, ինչ առանձնահատկություններ կան պարերի տարբեր՝ դանդաղ(ծանր), միջին և արագ (թռնոցի) կատարման ժամանակ: Պետք է իմանան պարաքայլերի հիմնական տարբերակները, որոնք ամենաշատն են կիրառվում հայկական ավանդական պարարվեստում, և դրանցից որը ինչպիսի վերակերպում է ստանում ըստ վերոնշյալ արագությունների: Տվյալ թեմայով սովորողները պետք է իմանան պարերի տարատեսակների և դրանց առանձնահատկությունների մասին:

Թեմա 2. Համայնքային ծիսական պարերգեր և պարեր/10 ժամ/

Թեմայի բովանդակությունը

Սովորողները իմանում են թե որն է ավանդական համայնքը, որոնք են համայնքային պարերը, ինչ դեր ու նշանակություն են ունեցել համայնքային ծիսական պարերն ու պարերգերը: Երբ են կատարվել տվյալ պարերը, ինչ առանձնահատկություններ ունեն, և որոնք են նրանցից ամենատարածվածները, Հայոց լեռնաշխարհի որ հատվածում ինչ առանձնահատկություններ և ինչ կիրառում են ունեցել համայնքային ծիսական պարերն ու պարերգերը:

Պետք է սովորեն ամենատարածված համայնքային պարերից **Գյոնդ(Գյովնդ)** և **Վերվերի** պարերն ու **Մեր տան իտև** և **Բասեն բարի** պարերգերը: Թեմայի ավարտին պետք է ձեռք բերեն պարերգերի և համապատասխան պարերի՝ ըստ նրանց բնորոշ շարժումների և ռիթմիկ նկարագրությունների, զուգադրումն ու ներդաշնակեցումը:

Ուսուցանվող պարերի և պարերգերի ցանկ

Գյոնդ(Գյովնդ), Վերվերի,

Մեր տան իտև, Բասեն բարի

Դիտվող և ունկնդրվող պարերն ու պարերգերը ըստ Հայկական պար DVD-պարուսույցի:

Թեմա 3. Պարերի կատարման առանձնահատկությունները/1ժամ/

Թեմայի բովանդակությունը

Պետք է սովորեն պարերի, նրանց կատարման ձևերի, ժամանակի մեջ եղած առանձնահատկությունները:

Այս թեմայով սովորողները պետք է իմանան հայկական պարերի կատարման

առանձնահատկությունները, կատարողական հմտությունները, պարաքայլերի կատարման տեխնիկան մյուս պարողների շարժումներին ներդաշնակվելու և պարողների խմբի մեկ ամբողջականությունը չխախտելու համար:
Պետք է տիրապետեն պարերի կատարման առանձնահատկություններին կախված պարերի կատարման ժամանակից, տեղանքից և յուրաքանչյուր պարի առանձնահատկությունից:

Թեմա 4. Ավանդական հարսանեկան պարեր/12ժամ/

Թեմայի բովանդակությունը

Սովորողներն այս թեմայով պետք է ուսումնասիրեն հարասնեկան պարերն ու պարերգերը: Այդ երգերը ըմբռնելու համար անհրաժեշտ հայկական հարսանեկան ծեսեր և ավանդույթներ, տվյալ մշակութային նմուշների կատարման համար ընդունված տեղանքների հարդարման և ձևավորման ավանդույթներ:
Պետք է տիրապետեն հարսանեկան ծեսերի առանձնահատկություններին, այդ ծեսերի մեջ պարերի, պարերգերի և հարսանեկան ծիսական երգերի ունեցած դերին, հարսանեկան մշակութային նմուշների կատարման հերթականությանը, նրանց կարևորությանը:
Սովորողները պետք է սովորեն **Թամզարա** հարսանեկան պարերգը, նրա տեքստային՝ հարսանեկան, քնարական և կատակերգային առանձնահատկությունները, և գրառված պարային տարբերակներից ամենատարածվածները:
Պետք է տիրապետեն հարսանեկան ծիսական պարերգի, որոշ տարածաշրջաններում ուղղակի պարի՝ **Փափուռու** շարժողական՝ պարային տեքստի հետ, սովորեն մեզ հասած պարերգային տարբերակների բառերն ու սովորեն կատարել և մեղեդու և երգի ուղեկցությամբ:
Ուսուցանվող պարերի և պարերգերի ցանկ
Թամզարա, Փափուռի
Դիտվող և ունկնդրվող պարերն ու պարերգերը ըստ Հայկական պար DVD-պարուսույցի:

Թեմա 5. Պարային տերմինաբանություն/1ժամ/

Թեմայի բովանդակությունը

Կարևոր է սովորողների ոչ միայն պարային հմտությունն ու երգելու ունակությունը, այլ նաև պարային և երաժշտական գրագիտությունը, պետք է իմանան պարային տերմինաբանությունը,

ինչպիսի դարձվածքներ, պարաքայլերի անվանումներ են եղել ավանդական պարարվեստում, և այդ ամենն ինչ զուգահեռներ ունի ժամանակակից և դասական պարարվեստի տերմինաբանության հետ: Երաժշտական տերմինաբանությունը ժողովրդական ավանդույթներում, կոմիտասյան աշխատություններում և նրանց զուգահեռները համաշխարհային երաժշտական տերմինաբանության հետ: Աշակերտը պետք է իմանա կարևոր տերմինները և նրանց կիրառման ճիշտ մոտեցումներն ու մեկնությունները:

Թեմա 6. Պաշտամունքային պարեր/9ժամ/

Թեմայի բովանդակությունը

Սովորողները պետք է իմանան հայոց բնապաշտության դարաշրջանից եկած ավանդույթներն ու հասկանան նրա շաղկապվածությունը մեր ավանդական մշակույթի հետ:

Պաշտամունքային մշակութային շերտի վերապրուքները հայ ավանդական մշակույթում, և մասնավորաբար թռչունների, խոյերի պաշտամունքի և արևապաշտության ազդեցությունը մեր մշակույթի ավանդական շերտի վրա:

Սովորողները պետք է իմանան Էջմիածին պարի ծագումնաբանությունը, շարժողական տեքստի առանձնահատկություններն ու նշանակությունները, արևապաշտությունից քրիստոնեություն նրանց նշանակության վերափոխումները և ներկայիս մեկնաբանությունն ըստ ավանդական պարային շարժողական տեքստերի ընդհանուր մեկնաբանությունների: Սովորեն Կոմիտասի գրառած մեղեդու համապատասխան բառերն ու կարողանան պարը կատարել նաև երգի ուղեկցությամբ:

Պետք է տիրապետեն խոյի, այծի պաշտամունքի խորհուրդներին, նրանց նշանակությանն ու հնամենի ծեսերում նրանց նշանակությանն ու ազդեցությանը: Սովորողները պետք է սովորեն խոյերի, կամ այծերի,՝քոշերի պաշտամունքից ծնված պարային մեծ շերտի՝ Քոչարիների նշանակությունը, շարժողական տեքստերի սկզբնական բացատրություններն ու այդ պարի ներկայիս տարբերակումները և տարածաշրջանային առանձնահատկությունները:

Ուսուցանվող պարերի և պարերգերի ցանկ

Էջմիածին, Քոչարի, Կարնո Քոչարի

Դիտվող և ունկնդրվող պարերն ու պարերգերը ըստ Հայկական պար DVD-պարուսույցի:

Թեմա 7. Ծիսական և մանկական երգեր/4ժամ/

Թեմայի բովանդակությունը

Պետք է տիրապետեն հայոց ծիսակարգի առանձնահատկություններին, և յուրաքանչյուր ծեսին համապատասխան մշակութային նմուշի տեղի և դերի կարևորությունը, կատարման տեղն ու ժամանակը, և այդ երգերի առանձնահատկություններն ու նշանակությունը:

Հայկական ավանդական մանկական խաղերգերը, երեխային մեծացնելու, ֆիզիկական և մտավոր զարգացվածությունը բարձրացնելու և նրա բնականոն աճն ապահովելու գործում ունեցած նշանակությունն ու նրանց կատարման հմտության, և գեղարվեստական ճաշակի և կատարելության ապահովումը:

Պիտի իմանան մի քանի ծիսական և մանկական երգերի նշանակությունն ու սովորեն նրանցից առավել տարածվածներից. Ծիսական՝ **Երգ ծննդյան** և մանկական՝ **Աղվեսն եկավ ճիվ, ճիվ** երգերը:

Ուսուցանվող երգերի ցանկ

Երգ ծննդյան, Աղվեսն եկավ ճիվ, ճիվ

Թեմա 8. Պարերի տարատեսակները/2ժամ/

Թեմայի բովանդակությունը

Սովորողները պետք է ուսումնասիրեն և տիրապետեն պարերի տարատեսակներին, դրանց տարբերակումներին, խմբակային պարերի, զուգապարերի և մենապարերի ոչ միայն կատարողական այլ նաև հոգեբանական և ծիսական նշանակության տարբերությունները:

Պետք է իմանան ծիսական, կենցաղային, պաշտամունքային, մեհենական(տաճարային) և այլ պարերի տարբերակումները, մեր օրերին հասած յուրաքանչյուր տարատեսակի պարանմուշներն ու նրանց կարևորությունը, դերը ոչ վաղ անցյալի մեր ծիսակարգերում և ժողովրդական կենցաղում:

Թեմա 9. Խաղերգեր և Հայրենասիրական երգեր /4ժամ/

Թեմայի բովանդակությունը

Սովորողները պետք է իմանան ավանդական խաղերգերը, դրանց ծագումնաբանությունը, նշանակությունն ու տիրապետեն դրանց կատարման, մեկնաբանության

առանձնահատկություններին, և հայ կենցաղում նրանց դերն ու կարևորությունը: Ուսումնասիրեն խաղերգերի լայն շերտ և սովորեն նրանցից մի որևէ հետաքրքրական նմուշ, որպես օրինակ վերցնելով **Ջանիման** խաղերգը:
Պետք է տիրապետեն հայ ավանդական երգարվեստի ամենաոգեղեն շերտի՝ հայրենասիրական երգերի, նրանց հնամենի տարբերակների, 19-րդ դարի վերջին 20-րդ դարասկզբին ազգային-ազատագրական շարժման բովում ստեղծված և թրծված երգերի նշանակությունը, սովորեն և տիրապետեն նրանցից լավագույն և ամենադասական տարբերակներին, մասնավորաբար Հայոց ազատամարտի առաջին կազմակերպության՝ Կարնո ազատագրական շարժման <<Պաշտպան Հայրենյաց>> կազմակերպության օրհներգի՝ **Ձայն մը հնչեց** երգին:
Ուսուցանվող երգերի ցանկ
Ջանիման, **Ձայն մը հնչեց**

Թեմա 10. Պարերի դասակարգման սկզբունքները ըստ ձևերի/1ժամ/
Թեմայի բովանդակությունը
Հայկական ավանդական պարերն ունեն իրենց դասկարագումը ըստ պարային ձևերի, նշանակության և ծագումնաբանության, պարային ընտանիքների և տարածաշրջանային պատկանելության, և յուրաքանչյուր սովորող պետք է տիրապետի ոչ միայն պարերի առանձնահակություններին, դրանց ձևերին, այլ նաև դասկարգմանը:

Թեմա 11. Որսորդական պարեր և ռազմապարեր/4ժամ/
Թեմայի բովանդակությունը
Հայոց իրականության մեջ մեծ տեղ են զբաղեցնում որսորդական պարերն ու ռազմապարերը, որն էլ արտացոլքն է մեր դարավոր կենցաղի, և մեր երկրի ազատության և անկախության մղված պայքարի և այդ պայքարին նախապատրաստվելու կարևորագույն մշակութային նմուշների գրեթե կատարելության և տիեզերական վերապրումի, ասպետ, զինվոր օծելու ծիսակարգի: Գրեթե յուրաքանչյուր տարածաշրջան ունի իր որսորդական և հատկապես ռազմական պարերը: Սովորողը իմանալով դրանց տարածաշրջանային և զինվորի մարմնակակրթական առանձնահատկությունների տարբերակումները պետք է տիրապետի տվյալ պարանմուշներից

ամենամատչելիներին, Շատախի որսորդական, և ծիսական ռազմապարին՝ **Քեռձիին**, և Ալաշկերտի ռազմապարերից մեկին՝ **Շարանի** պարին:

Ուսուցանվող պարերի և պարերգերի ցանկ

Քեռձի, Շարանի

Դիտվող և ունկնդրվող պարերն ու պարերգերը ըստ Հայկական պար DVD-պարուսույցի:

Թեմա 12. Ամփոփում/1ժամ/

Թեմայի բովանդակությունը

Պետք է կատարվի ամփոփում, ընդհանուր անցած նյութի վերլուծություն, մի անգամ ևս ի մի բերելով ողջ անցածն ու հայ ավանդական երգ, երաժշտության, պարերի և պարերգերի մասին 5-րդ դասարանում, մեկ ուս. տարվա ընթացքում ստացած գիտելիքները: Պետք է նաև ընդհանուր եզրեր տանել հաջորդ ուս. տարվա՝ 6-րդ դասարանում անցկացվելիք դասընթացների և նրանցում տրվելիք գիտելիքների հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2014թ.----------N հրամանի

ԾՐԱԳԻՐ (փորձնական)

հանրակրթական հիմնական դպրոցի

<<Երաժշտություն>> առարկայի

(5-րդ դասարան, 17 ժամ)

Բացատրագիր

5-րդ դասարանում շարունակվում են տարրական դասարաններում սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման ուղղությամբ կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքները: Սովորողները 5-րդ դասարանում ծանոթանում են արվեստների մեծ ընտանիքին, ուսումնասիրում երաժշտության կապը գրականության, պարարվեստի, կերպարվեստի, թատրոնի և կինոյի հետ: Այս դեպքում երաժշտությունը միջնորդ է դառնում արվեստների փոխըմբռնումներն ավելի ուժեղացնելու համար: Ցույց են տրվում թե ինչպես են արվեստները մեկը մյուսին լրացնելով ամբողջացնում գեղարվեստական կերպարները (պատկերները), մեծացնում դրանց ներգործության ուժը մարդու հոգևոր աշխարհի վրա:

Ցույց է տրվում տարբեր արվեստների և կյանքի միջև եղած կապերի ընդհանրությունները: Այս դեպքում արվեստները հանդես են գալիս որպես աշխարհի հոգևոր յուրացման և իրականության ճանաչման լավագույն միջոցներից մեկը:

Սովորողները զգում և տեսնում են, որ չնայած արվեստները մեկը մյուսից տարբերվում են թե բովանդակությամբ և թե ձևով, այնուամենայնիվ, իրար հետ կապված են բազմաթիվ թելերով: Արվեստներից մեկի իմացությունն օգնում է մյուսների ավելի խորը ըմբռնմանը:

Արվեստի տեսակները մեկը մյուսի հետ գտնվում են որոշակի կապի մեջ, որը դրսևորվում է միմյանց վրա անմիջական ներգործությամբ, կամ միջնորդավորված փոխազդեցությամբ:

Նման փոխազդեցությունների միջոցով արվեստները միավորվում և միաձուլվում են մեկ ամբողջության մեջ և արտահայտում ընդհանրացված գաղափարներ, մտքեր, տրամադրություններ, նկարագրում իրական աշխարհի բազմազան երևույթներ և այն փոխանցում մարդկանց, նրանց մեջ առաջ բերում համապատասխան տրամադրություններ, հույզեր և մտքեր:

Հաճախ կոմպոզիտորները՝ հրապուրվելով գրական ստեղծագործության բովանդակությամբ ստեղծում են ծրագրային սիմֆոնիկ, նվագարանային այնպիսի ստեղծագործություններ, որտեղ տեքստին փոխարինում են երաժշտական բազմերանգ հնչողությամբ ստեղծված <<երաժշտական կերպարներ>>:

Այսպես, սովորողները գիտակցում են, որ արվեստի տեսակները կարող են և' արտահայտել, և' նկարագրել, և' պատկերել: Արտահայտում են մարդկային զգացմունքներ, մտքեր, տրամադրություններ, վերաբերմունք կյանքի նկատմամբ, նկարագրում բնության երևույթներ, շարժում, ժեստեր, դիմախաղ և այլն:

Երաժշտությունն ինքնին խոսքի նման չի կարող առարկաների, երևույթների մասին կոնկրետ պատկերացումներ տալ, այդ բանը նա կարող է անել զուգորդումների միջոցով, որոշակի հույզեր առաջացնելով ուշադրություն հրավիրել միայն երևույթների էության վրա: Դա իհարկե կունենա ճանաչողական նշանակություն: Իսկ կերպարվեստը իր արտահայտչամիջոցներով կարող է տալ արտաքին աշխարհի զգայականորեն ընկալելի երևույթների և առարկաների ողջ բազմազանությունը:

Այսպես, սովորողները օգտվելով արվեստների զգայական առանձնահատկություններից, հնարավորություն են ստանում խորացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության, ստեղծագործական կարողությունների ու հմտությունների շրջանակը:

5-րդ դասարանում նույնպես կիրառվում են երաժշտական գործունեության տեսակները, միայն թե նոր բովանդակությամբ, նոր թեմատիկայով: Ընդլայնվում են սովորողների տեսական գիտելիքները, կատարողական հմտությունները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ձևավորել և կատարելագործել արվեստների գեղեցկությունը զգալու և ընկալելու կարողությունը /երաժշտություն, գրականություն, պարարվեստ, կերպարվեստ, թատրոն, կինո/
- ծանոթացնել յուրաքանչյուր արվեստի արտահայտչական միջոցներին:
- զարգացնել երգչային ձայնը՝ սոպրանո **դո-մի2, ալտ՝ լափ-դո2**
- զարգացնել երգչային ճիշտ շնչառությունը, առոգանությամբ, ճիշտ ձայնակազմությամբ երգելու հմտությունը
- զարգացնել անհատական և խմբային երգեցողության հմտությունները, լայնորեն կիրառել ձայնավարժությունները
- ծանոթացնել պրիմա, սեկունդա, տերցիա, կվարտա ու կվինտա ինտերվալներին և դրանց հնչողությանը
- ծանոթացնել <<լադ>> հասկացությանը
- զարգացնել նոտաներով երկձայն երգելու կարողությունը
- ծանոթացնել իգական և արական երգչային ձայներին և դրանց հնչողությանը
- զարգացնել քառատող և մեղեդի հորինելու, ապա երգ ստեղծելու կարողությունը
- ծանոթացնել ժողովրդական և աշուղական երաժշտությանը
- համառոտ ներկայացնել հայ և արտասահմանյան կոմպոզիտորների կյանքը և ստեղծագործությունը:

Թեմա - 5-1 Երաժշտությունը և գրականությունը /7ժամ/

Թեմայի բովանդակությունը

Այս թեմայով սովորողներն իմանում են, որ երաժշտությունը և գրականությունը մոտ արվեստներ են, քանի որ երկուսի արտահայտումը տեղի է ունենում շարժման և ժամանակի

մեջ՝ մեկը խոսքի, մյուսը հնչյունների միջոցով և անմիջականորեն ներգործում են մարդու հուզաշխարհի վրա:

Երաժշտության և գրականության, պոեզիայի փոխհարաբերությունների շնորհիվ ստեղծվում են հետևյալ ժանրերը՝ երգը, ռոմանսը, օպերան, կանտատը, օրատորիան և այլն:

Երաժշտության և գրականության համագործակցության միջոցով հնարավոր է դառնում դրանց և կյանքի միջև կապ ստեղծել և իրականության արտացոլումը դարձնել ավելի պատկերավոր և զգայական, որն իր հերթին նպաստում է սովորողների պատկերային մտածողության զարգացմանը: Սովորողները գիտակցում են, որ երաժշտությունն իր հերթին խոսքի իմաստին, ռիթմին և ինտոնացիային միանալով, գրականության, պոեզիայի կերպարները դարձնում է ավելի հուզազգացմունքային և արտահայտիչ, ավելի է մեծացնում գրական գեղարվեստական կերպարների ներգործության ուժը սովորողների վրա:

Սովորողները սովորում են երգեր, լսում նոր երաժշտական ստեղծագործություններ՝ օպերաներ, կանտատներ, օրատորիաներ և ավելի խորը ուսումնասիրում այդ ժանրերը:

Երգի ուսուցման ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում ճիշտ շնչառության, նոտաներով և երկձայն երգերի մաքուր ինտոնացիայով գեղեցիկ երգեցողության, երկձայն, եռաձայն և քառաձայն ռիթմական նվագակցությունների կատարման վրա:

Հիմնական խնդիրները

- կատարել երաժշտության, գրականության փոխկապակցվածության համառոտ վերլուծություն
- զարգացնել երաժշտական ստեղծագործությունները ուշադիր լսելու և ինքնուրույն մեկնաբանելու կարողությունը
- ունկնդրել հատվածներ, օպերաներից, բալետներից և սիմֆոնիկ ժանրի ծրագրային ստեղծագործություններից և վերլուծել
- ունկնդրել ժողովրդական և աշուղական երաժշտությունը
- զարգացնել երկձայն երգեցողության կարողությունը՝ ճիշտ շնչառության, առոգանության և ձայնակազմության իմաստով
- զարգացնել մեներգչային և խմբային երգեցողության կարողությունները՝ կատարել համապատասխան ձայնավարժություններ

- զարգացնել նոտաներով երկձայն երգեցողության հմտությունները
- ծանոթացնել պրիմա, սեկունդա, տերցիա ինտերվալների հնչողությանը և կազմությանը
- համառոտ ներկայացնել հանրահայտ հայ և արտասահմանյան կոմպոզիտորների կյանքը և ստեղծագործական գործունեությունը:

Ուսուցանվող երգերի ցանկ

<<Ամպի տակից>>, <<Համբարձում յայլա>> <<Անուշ>> օպերայից - երաժշտ.՝ Ա. Տիգրանյանի
<<Զեյթունցիների քայլերգը>> <<Արշակ երկրորդ>> օպերայից - երաժշտ.՝ Տ. Չուխաջյանի
<<Աղբյուրն ու առուն>> - երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի, խոսք՝ Հ. Թումանյանի
<<Քամանչա>> - խոսք և երաժշտ.՝ Սայաթ -Նովայի
<<Ազատություն>>- երաժշտ.՝ Տ. Չուխաջյանի
<<Զեյթունցիների քայլերգը>>- հայկ. ժող. երգ, մշ.՝ Տ. Չուխաջյանի
<<Հայրենիքիս հետ>> - երաժշտ.՝ Ա. Հարությունյանի, խոսք՝ Հ. Թումանյանի
<<Գարնան կարոտ >> - երաժշտ.՝ Վ. Ա. Մոցարտի, խոսք՝ Օվերբեկի:

ժողովրդական երգեր

<<Հովն անուշ>>, <<Սարեն կուգա ձիավոր>>, <<Ալագյազ>>, <<Կենաց երգ>>, <<Հովն ընկավ>>, <<Կարոտ>>

Ունկնդրվող ստեղծագործությունների ցանկ

<<Հայրենիքիս հետ>> - երաժշտ.՝ Ա. Հարությունյանի, խոսք՝ Հ. Թումանյանի
<<Հայրենիք>> կանտատի 1-ին մասը և <<Օրորոցային>> -երաժշտ.՝ Ա. Հարությունյանի
Նախերգանք <<Անուշ>> օպերայից -երաժշտ.՝ Ա. Տիգրանյանի
Հատվածներ <<Ալմաստ>> օպերայից երաժշտ.՝ Ա. Սպենդիարյանի
<<Երեք արմավենի>> սիմֆոնիկ պոեմ ըստ Լերմոնտովի - երաժտ.՝ Ա. Սպենդիարյանի

Հատվածներ <<Արշակ երկրորդ>> օպերայից - երաժշտ.՝ Տ. Չուխաջյանի

Ա. Սաթյան - Արարատյան դաշտի երգերի շարք

Վ. Ա. Մոցարտ – հատվածներ <<Կախարդական սրինգ>> օպերայից և սոլ-մինոր սիմֆոնիայի 1-ի մասից

Տ. Մանսուրյան - Երկու հատված Հ. Թումանյանի տեքստերով գրված խմբերգային շարքից՝ <<Արագիլ>> և <<Հեյ, կանաչ ախպեր>>

<<Ֆորել>> - երաժշտ.՝ Ֆ. Շուբերտի, խոսք՝ Յո. Մայրհովերի

<<Արտույտ>> – երաժշտ.՝ Մ. Գլինկայի

<<Լու>> - երաժշտ.՝ Մուսորգսկու, խոսք՝ Գյոթեի:

Թեմա - 5-2 Երաժշտությունը և պարարվեստը /3 ժամ/

Թեմայի բովանդակությունը

Սովորողներն իմանում են երաժշտության և պարարվեստի ներքին կապերի և ընդհանրությունների մասին, այն որ այդ երկու արվեստները լրացնում են միմյանց, որ դրանք <<ազգակից>> արվեստներ են, քանի որ ծնվել և սնվում են միևնույն արմատից՝ <<ռիթմից>>, որն անմիջական կապի մեջ է մարդու ռիթմական զգացողության հետ և կողմնորոշիչ դեր է կատարում նրա շարժումային գործունեությունը կարգավորելու գործընթացում:

Այսպես, արվեստները մեկը մյուսին լրացնելով օգնել են մարդուն արտահայտել բազմերանգ զգացմունքներ, տրամադրություններ, ընկալել կյանքի բազմապիսի երևույթներ:

Հիմնական խնդիրները

- զարգացնել թեմայի հետ կապված երաժշտական նոր ստեղծագործություններ լսելու կարողությունը
- զարգացնել պարերգերի բնույթին և բովանդակությանը համապատասխան ռիթմական շարժումներ կատարելու կարողությունը

- ցույց տալ երաժշտության արտահայտչական միջոցների և շարժումների միջև փոխադարձ կապը
- զարգացնել երաժշտական կերպարները շարժումների միջոցով արտահայտելու կարողությունը
- կատարել շարժումային իմպրովիզացիաներ, ինքնուրույն ստեղծելով պարային տարրեր
- ստեղծել ռիթմական և մեղեդային նվագակցություններ և նվագակցել հնչող երաժշտությանը
- ծանոթացնել լադ հասկացությանը, լադերի տեսակներին
- երգել նոտաներով երկձայն մեղեդիներ
- ծանոթանալ կվարտա և կվինտա ինտերվալների հնչողությանը և կազմությանը:

Ուսուցանվող երգերի ցանկ

<<Գովք Հայաստանի>> - երաժշտ.՝ Ս. Ջրբաշյանի, խոսք՝ Սարմենի

<<Ձոն գրքին>> - երաժշտ.՝ Գ. Չթչյանի, խոսք՝ Ս. Մուրադյանի

<<Աղջիկների պարերգը>> - հայկ. ժող. երգ

<<Հայրենիքի ճամփաներով>> - երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի, խոսք՝ Ա. Սահակյանի

Ժողովրդական երգեր

<<Սարեն կուգա>>, <<Նարոյ>>, <<Հա նինա>>

Ունկնդրվող ստեղծագործությունների ցանկ

Ա. Խաչատրյան, հատվածներ <<Գայանե>> և >>Սպարտակ>> բալետներից

Էդ. Հովհաննիսյան, հատվածներ <<Անտունի>> և <<Մարմար>> բալետներից

Գ. Եղիազարյան, հատվածներ <<Սևան>> բալետից

Գ. Հախինյան, հատվածներ <<Լոռեցի Սաքո>> բալետից

Բրամս, հունգարական պարեր

Մ. Օգինսկի, պոլոնեզ <<Հրաժեշտ հայրենիքին>>

Պ. Չայկովսկի, հատվածներ <<Շչելկունչիկ>> և <<Կարապի լիճը>> բալետներից:

Թեմա-5-3 Երաժշտությունը և կերպարվեստը /4 ժամ/

Թեմայի բովանդակությունը:

Այս թեմայով սովորողներն իմանում են, որ չնայած երաժշտությունը և կերպարվեստը տարբերվում են արտահայտչական յուրօրինակ առանձնահատկություններով, այնուամենայնիվ, երկուսի միջև կան էական կապեր:

Երաժշտությունը ժամանակային, լսողական արվեստ է, իսկ կերպարվեստը տարածական, տեսողական: Կերպարվեստը իր արտահայտչամիջոցներով՝ գծով, գույների փոխհարաբերությամբ կարողանում է արտացոլել և տեսանելի դարձնել իրականության երևույթները, աշխարհի առարկայական բազմազանությունը, գեղեցկությունը, սրանք տեսողության միջոցով են ներազդում ու մարդու մեջ առաջացնում համապատասխան զգացումներ և տրամադրություններ: Իսկ երաժշտությունը ժամանակի ընթացքում տարածվող հնչյունների շարժման միջոցով է կարողանում արտահայտել (հաղորդել) աշխարհի գեղեցկությունը, մարդկային ապրումները, զգացմունքներն ու տրամադրությունները:

Սովորողները հասկանում են, որ թե երաժշտական ստեղծագործությունը լսելիս, և թե գեղանկար դիտելիս, իրենց մեջ արթնանում են համապատասխան զգացմունքներ, հույզեր և գաղափարներ: Երկու արվեստներն էլ բազմապիսի զգացմունքներ առաջացնելով զարգացնում են սովորողների գեղագիտական ճաշակը:

Այսպես, սովորողները երաժշտության դասին լսում են այնպիսի ստեղծագործություններ և դիտում գեղանկարներ, որոնք այդ երկու արվեստների փոխազդեցության ու փոխներգործության արդյունք են հանդիսանում, ինչպես, օրինակ, կոմպոզիտոր Ղ. Սարյանի <<Հովվերգական սիմֆոնիան>> գրված Մ. Սարյանի գեղանկարների ազդեցության ներգործությամբ, Ն. Ռիմսկի – Կորսակովի <<Ծով>> սիմֆոնիկ պատկերը՝ գրված Այվազովսկու <<Իններորդ ալիք>> կտավի հիման վրա:

Հիմնական խնդիրները

- զարգացնել թեմային համապատասխան նոր երաժշտական ստեղծագործություններ լսելու կարողություն
- կարողանալ լսել երաժշտական ստեղծագործությունը և վերլուծել
- կարողանալ նկարի մեջ <<լսել>> երաժշտություն և երաժշտության մեջ <<տեսնել>> պատկեր
- կարողանալ երաժշտության բնույթը վերարտադրել նկարով
- հնչողությամբ ճանաչել երգչախմբերի տեսակները
- երգերի և հնչող երաժշտության համար ստեղծել երկձայն և բազմաձայն ռիթմական նվագակցություններ և կատարել
- երգել ինտերվալներ կվինտայի սահմանում:

Ուսուցանվող երգերի ցանկ

<<Պատգամ որդուս>>- երաժշտ՝. Ռ. Պետրոսյանի, խոսք՝. Ս. Կապուտիկյանի

<<Մարտիկի երգը>>- երաժշտ՝. Ա. Սաթյանի, խոսք.՝ Գ. Սարյանի

<<Իմ լավ Երևան>> - երաժշտ՝. Ռ. Պետրոսյանի, խոսք՝. Ն. Միքայելյանի

<<Ձմռան երգ>> - երաժշտ՝. Ս. Նաղդյանի, խոսք՝. Վ. Վարդանյանի

<<Գարնան սպասում>> - երաժշտ՝.Ա. Լուսինյանի, խոսք՝. Ն. Միքայելյանի

<<Քեզ եմ երգում, հայրենիք>> - երաժշտ՝.Ղ. Սարյանի, խոսք՝. Գ. Սարյանի

<<Երգ մայրիկին>> - երաժշտ.՝ Ա. Լուսինյանի, խոսք՝ Ն. Միքաելյանի

<<Աշունն անտես նկարիչ>> - երաժշտ.՝ Ա. Օհանյանի, խոսք՝ Վ. Տալյանի

Ժողովրդական երգեր

<<Դարձյալ փայլեց>>

<<Կռունկ Հայաստանի>>

<<Երազ>> - մշ. Մ. Մազմանյանի

Ունկնդրվող ստեղծագործությունների ցանկ

Գ. Արմենյան, <<Վարդգես Սուրենյանցի պատկերասրահում>> (հատվածներ շարքից)

Մ. Մուսորգսկի, <<Պատկերներ ցուցահանդեսից>> (հատվածներ)

Ղ. Սարյան, հատվածներ <<Հայաստան>> սիմֆոնիկ պաննոյից ՝<<Գառնի>>, <<Հին Երևան>>, <<Արարատյան դաշտ>>, <<Արևային բնապատկերներ>>, <<Լուսաբաց>> սիմֆոնիկ պատկերներից

Գ. Եղիազարյան, սիմֆոնիկ պոեմ՝ <<Արևաճագին>>

Կ. Դեբյուսի, <<Լուսնի լույսը>>

Լոռվա հորովել – Կոմիտասի կատարմամբ (Մ. Սարյանի <<Հորովել>> նկարի ցուցադրմամբ)

Ն. Ռիմսկի - Կորսակով <<Ծովը>> <<Շահրազադե>> սիմֆոնիկ պատկերի 1-ին և 4-րդ մաս – (Այվազովսկու <<իններորդ ալիքը>> նկարի ներգործության ներքո)

Ա. Հարությունյան Սասունցիների պարը – (Գ. Էմինի նույնանուն ոտանավորը և Գ. Խանջյանի համանուն նկարը)

Գ. Չթչյան, հատվածներ <<Մանկական պատկերներ>> շարքից՝ <<Պահմտոցի>>, <<Երաժշտական արկղիկ>>, <<Գազանիկների շքերթը>> և <<Բնանկար>>:

Թեմա - 5-4 Երաժշտությունը թատրոնում և կինոյում /3 ժամ/

Թեմայի բովանդակությունը

Երաժշտությունը թատրոնում և կինոյում կատարում է բազմատեսակ դեր:

Հանդես է գալիս ոչ միայն որպես գեղարվեստական ֆոն, այլև գործող անձանց բնավորությունների և փոխհարաբերությունների բնութագրական զգայական միջոց:

Երաժշտությունը շարժում է հաղորդում թատրոնի և կինոյի գործողություններին: Թատրոնում և կինոյում հերոսների կերպարները դառնում են առավել ցայտուն:

Երաժշտությունը ոչ միայն նոր երանգ է հաղորդում հերոսներին, այլև դարձնում ամբողջական, նաև հաճախ դառնում է, դեպքերի, իրադարձությունների անմիջական մասնակիցը: Թատրոնը և կինոն, օպերայի պես տարածական–ժամանակային արվեստներ են, կոլեկտիվ ստեղծագործության արդյունք (գրող, ռեժիսոր, կոմպոզիտոր, նկարիչ, դերասան, պարուսույց և այլն):

Կինոն արվեստի ամենամասսայական տեսակն է, որտեղ երաժշտությունը կարևոր դեր ու նշանակություն ունի:

Հիմնական խնդիրները

- զարգացնել թատրոնում և կինոյում հնչող երաժշտությունը ընկալելու կարողություն

- ունկնդրել հատվածներ թատրոնում և կինոյում հնչող երաժշտությունից և նշել օպերայի հետ նմանությունները և տարբերությունները
- ծանոթացնել թատրոնի և կինոյի համար գրված երաժշտության հեղինակներին
- լսել և կատարել երգեր թատերական ներկայացումներից և կինոնկարներից
- զարգացնել երկձայն երգեցողության կարողությունները և հմտությունները (անսամբլ, առոգանություն, ձայնակազմություն)
- զարգացնել ինտերվալները ճանաչելու և երգելու կարողությունը կվինտայի սահմանում:

Ուսուցանվող երգերի ցանկ

<<Պեպոյի երգը>>- երաժշտ.՝ Ա. Խաչատրյանի, խոսք՝ Ե. Չարենցի

<<Երկիր հայրենի>> - <<Հայրիկ>> կինոնկարից, խոսք և երաժշտ.՝ Ռ. Ամիրխանյանի

<<Արփա -Սևան>>- երաժշտ.՝ Էդ. Հովհաննիսյանի, խոսք՝ Յու. Սահակյանի

<<Պատրանք>>- երաժշտ.՝ Վ. Արծրունու, խոսք՝ Կոմիտասի:

Ունկնդրվող ստեղծագործությունների ցանկ

Հատվածներ <<Պեպո>> և <<Զանգեզուր>> կինոնկարներից, երաժշտ՝. Ա. Խաչատրյանի

Քայլերգ <<Նվագախմբի տղաները>> կինոնկարից – երաժշտ.՝ Գ. Արմենյանի

Հատվածներ <<Հարսնատես>> և <<Մանրուք>> կինոնկարներից - երաժշտ.՝ Ղ. Սարյանի

Գալոպ>> և Վալս <<Դիմակահանդես>> սյուիտից - երաժշտ.՝Ա. Խաչատրյանի

Հատվածներ <<Տժվժիկ>> կինոնկարից, երաժշտ.՝- Է. Բաղդասարյանի

Հատվածներ <<Գարնան 17 ակնթարթները>> կինոնկարից, երաժշտ.՝ Մ. Թարիվերդիևի

Հատվածներ <<Երաժշտական հնչյուններ>> մյուզիքլից - երաժշտ.՝ Ռ. Ռոջերսի

Հատվածներ Վ. Սարյանի <<Իմ սիրտը լեռներում է>> պիեսի ներկայացումից, երաժշտ.՝ Ա. Բաբաջանյանի

Հատվածներ <<Հարսնացուն հյուսիսից>> կինոնկարի համար գրված Ա. Բաբաջանյանի երաժշտությունից

Աղբյուրի մոտ - հատվածներ <<Անահիտ>> կինոնկարից – երաժշտ.՝ Ա. Սաթյանի

Հատվածներ Տ. Մանսուրյանի կինոերաժշտությունից

Հատվածներ <<Ճանապարհ դեպի կրկես>>, <<Փառքի օղակներ>> կինոնկարներից, երաժշտ.՝ Կ. Օրբելյանի: